Դրոգատերոյի դիրքը մասնաւոր դեղեցկութիւն պիտի տայ ամէն չինուածոց որ այն մեծ դահլիճին չորս կողմը պիտի կանգնուին, և այն դահլիճին գագաթէն ու տանիքէն զարմանալի տեսարան մը պիտի բացուի դիտողին առջև։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԱՀԱՆԴԷՍ Ի ՖԻԼԱՏԵԼՖԻԱ

Ի յիշատակ Հարիւրամեան տարեդարձի ազատութեան Միացեալ-Նահանգաց կանգնեցին Ամերիկացիք 'Ի Ֆիլատելֆիա այս համաշխարհական արուեստից Հանդիսարանն, որ տարւոյս մայիսի 10ին մեծ շքեղութեամբ բացուեցաւ, ուր երկու հարիւր յիսուն հազար հանդիսադիրք ամէն ազգէ ու ամէն լեզուէ ներկայ կը գտնուէին։ Հանդիսին գլուխ էր Միացեալ-Նահանգաց Նախագահ զօրավարն Կրանդ, հետն ունենալով Պրազիլի կայսրը, կառավարական բոլոր բարձր պաշտօնատարք, ժողովարանին ծերակոյտը, ցամաքային ու ծովային բարձրաստիճան սպայք, և օտար ազգաց ամէն ներկայացուցիչները։ Չորաց դունդ մ'ալ 10000 հոգի այլևայլ զօրանոցներէ եկեր էին թէ' պահպանութիւն ընելու և թէ այն հանդէսը փառաւորելու։ Իսկ Ֆիլատելֆիա քաղաքը նոյն օրը կայտառ կերպարանք մ'առեր էր. բոլոր հասարակաց շէնքերը ու մասնաւորաց տունները ազգային դրօշակներով զարդարուած էին. արք և կանայք ալ կը կրէին Ամերիկայի ազատութեան այս նշանը, ինչպէս նաև ձիերն անդամ կը տանէին կրկին դրօշակ, մէկը գլուխներնուն վրայ, միւսը թամբերնուն վրայ, որով արուեստից Հանդիսարանին ճամբանեը և սրահները արտաքոյ կարգի զարդարութիւն մը առեր էին. օդն ալ դեղեցիկ ու պայծառ էր։ Բացման հանդէսը կատարուեցաւ պատմական թանդարանին (Memorial hall) մէջ։

Երբ հասաւ Կրանդ Նախագահն ընկերակցութեամբ Պրազիլի կայսեր, 160 նուագածուք միաբանութեան գեղեցիկ երգախառնուրդք մը (pot-pourri) զարկին, որ ամէն երկրի ազգային եղանակաց երաժշտական կտորներու բաղադրութիւն մ'էր. ետքէն վակներ դերմանացի երևելի երաժշտին անուանի գնացքը (marche) զարկին, որ մասնաւորապէս այս հանդիսին համար շարադրեր էր, 25000 ֆռանգ վարձք ընդունելով։ Այս երաժշտութիւնը լսընալէն ետև, 800 ձայնք ընկերակցութեամբ նուագարանաց հարիւրամեայ տարեդարձին երգն երգեցին։ Վերջէն Սիմոն անուանով նորաղանդ եպիսկոպոսն երկայն աղօթք մը կարդաց աւուր պատշաճ, և երկնից օրհնութիւնը խնդրեց այն մեծ գործոյն վրայ, որուն յիշատակն էր այսօր։ Ամենէն ետքը կրանդ Նախագահը ճառ մը խօսեցաւ, և բացաւ Արուեստահանդէսը։ Անթիւ բազմութիւնն որ մինչև նոյն ժամանակն կանգ առեր անհամբեր կը սպասէր փակարանին մէջ, ահաւոր հեղեղի մը նման Հանդիսարանին ներսը թափեցաւ, և քանի մը վայրկենի մէջ անոր բոլոր մասունքը այցելուաց բազմութեամբն ողողեցաւ։

Ֆիլատելֆիոյ այս Արուեստահանդիսին ծախքն եղեր է գրեթէ 8,500000 տոլար, որ է 42 միլիոն ու կէս ֆռանգ, օրական ալ ծախք ունի 8500 տոլար, այսինքն 42500 ֆրանգ։ Հաշիւ եղեր է որ վրայէ վրայ ամէն օր 100000 այցելուք պէտք է Արուեստահանդէսը մտնեն, հատուցանելով մարդ գլուխ 2.50 ֆռանգ, որպէս զի 150 օրուան մէջ, որ պիտի տեւէ Արուեստահանդէսը, կարե-

digitised by A.R.A.R.@

լի ըլլայ եղած ծախքն հանել. իսկ ընդ հակառակն հիմա օրը 20000 այցելուք կը մտնեն, որով կորուստ պիտի ըլլայ։

Մինչև հիմա չահագիտական ոգին բաւական զարգացեր էր. այլեայլ ազգաց մէջ, բայց Ամերիկացւոց պահուած էր իրենց Ֆիլատելֆիոյ Արուեստահանդիսին պատճառաւ այնպիսի տահման մը հասնիլ, որ դժուարաւ կարելի է քան զայն գերազանցել։ Ամենանուաստ արուեստէն սկսեալ մինչև բարձրագոյն պաշտօնները կարգ մը ձեռնարկութեանց են և չահու դուռն ու առանձնաշնորհութեանց, ուր տոլարները բիւրաւոր կը տեղան հարիւրամեայ տարեդարձի ցանձնաժողովն արկղին մէջ։ Հետեւեալ օրինակները գաղափար մը կը բերեն տալ Ամերիկացւոց հանճարոյն բեղմնաւորութեանն այս նիւթիս մէջ։

Առանձնական մէկն 50000 տոլար հատուցեր է որ ինքն ունենայ առանձնաշնորհութիւնն ալելու Արուեստահանդիսին չէնքը, յանձն առնելով հատուցանել բոլոր իր վարձաւորները և ամենամաքուր պահել չէնքին յիսուն և աւելի էգր յատակն։ Շատ զարմանալի է այս արուեստաւորին ճարտարութիւնը։ Ինքը մտածեր է որ չափաւոր տուրք առնելով իւրաքանչիւր հանդիսարէն (exposant) անոր բաժինն ալելու համար, և իշխանութիւն ունենալով իրեն պահելու ինչ գրամ ու անդին առարկայք որ կրնան կորսուիլ աւելուքին մէջ, գեղեցիկ վաստակ մը կ'ունենայ այս առանձնաշնորհութեամբը, թէ և բարձր գնով առած ըլլայ զայն։

Առանձնական ուրիշ մ'ալ 12000 տոլար հատուցեր է որ ինքը միայն առանձնաշնորհութիւն ունենայ վարձու տալ նուաւոյ նստարաններ այցելուաց, ժամն 50 սենտ պահանջելով։ Եւ թէ որ այս նստարանները 300 թուէն աւելի ըլլան՝ պարտական ըլլայ մնացած իւրաքանչիւրին համար հատուցանել 40 տոլար, և որովհետև իրեն 150 նստարան ալ հարկաւոր են, անոր համար 6000 տոլար ալ վրայ պիտի տայ, այսինքն ընդամենն 18000 տոլար պիտի հատուցանէ այս առանձնաշնորհութեանն համար։

Ճարտար ուրիշ մ'ալ գուշակելով որ ամառը շատ տաք պիտի ընէ, 30000 տոլար հատուցեր է որ ինքն ունենայ իրաւունք կազային ըմպելիք (soda water) վաճառելու արուեստից հանդիսարանին մէջ վեց ամիս։ Բայց 'ի սակէ պիտի հատուցանէ նաև 20 սենտ վաճառուած ամէն մէկ կէլլոն գլուխ. և միայն այս պայմանաւ պիտի հատուցանէ 32000 տոլար, որով ընդ ամենը պիտի հատուցանէ 62000 տոլար կազեղէն ըմպելիք վաճառելու համար։

Հարիւրամեայ տարեդարձին ցուցակը կազմող ընկերութիւնը հատուցեր է 100000 տոլար, և առեր է առանձնաշնորհութիւնն ինքն տալելու և վաճառելու Արուեստահանդիսին պաշտօնական լիակատար ցուցակը, որ պիտի բովանդակուի չորս հատորի մէջ, ու գինը պիտի ըլլայ 25 սենտ հատորը, և ընկերութիւնը կարող պիտի չլլայ 25 էջէն աւելի ծանուցմունք դնելու իւրաքանչիւր հատորին մէջ։

Ջխախոտի վաճառական մը 18000 տոլար հատուցեր է որ կարող ըլլայ ինքն ալ Արուեստահանդիսին պարտէզներուն մէջ հինգ խանութ բանալ սիկար և ծխախոտ վաճառելու համար, ամենեին իրաւունք չունենալով չէնքին ներքին կողմը վաճառելու և ուրիշ նոյնպիսի վաճառականներու արգելք ըլլալու։

Ընկերութիւն մ'ալ հատուցեր է 20000 տոլար որպէս զի առանձնաշնորհութիւն ունենայ չէնք մը կանգնելու Հանիգրատարան Ռատարակաց (Confort public) անուամբ, որ ունի 100 քառակուսի ոտք տարածութիւն և արժէր է առնուազ 10000 տոլար։ Այս չէնքին մէջ կան այցելուաց համար սպասելու դահլիճներ, ընթերցման և նամակագրութեան սենեակներ, և ընկերութեան արգելուած է հատուցմունք մը պահանջելու։ Այս ընկերութիւնը պաշտօնատեղիներ և գործակատարներ ունի չէնքին և պարտէզներուն այլեայլ կողմերը, որոնք չափաւոր գնով յանձնէ այս առանձնաշնորհութեանն համար։

digitised by A.R.A.R.@

առու կ'ըլլան պահելու մէկուն ձեռքն ունեցած ծրարը, բեռը, գաւազանը, հովանոցը, և այլն. և կը վաճառէ լրագիրներ, պարբերական օրագիրներ, բայց առանց արգելք ըլլալու լրագրաց ուրիշ վաճառականներու։ Այս ընկերութիւնն ունի նաև ներքին հեռագրութիւն։ Զոր օրինակ, ճանապարհորդը որ արուեստից Հանդիսարանին մէկ գոնէն կը մտնէն՝ կրնան հրաման ղրկել որ իրենց բեռն ու տոմսակը պատրաստ ըլլան ուրիշ դուռ մը և որոշեալ ժամ մը։

Երկրագունտ ըսուած Պանդոկ մը անմիջապէս գլխաւոր մուտքին դուրսը կանգնուած է. ունի 1800 սենեակ, կրնայ բնակեցնել ու կերակրել օր ըստ օրէ 3000 հոգի, և այնարհիս ամենէն ընդարձակ պանդոկը կը համարուի։ Այս պանդոկին չենութեանն առանձնաշնորհութիւնն համեմատութեամբ քիչ դրամով առնուեցաւ, այսինքն 10500 տոլար տալով։

Իսկ ներսի կողմը վեց ճաշարան կան, ամենքն ալ մանաւոր չենքեր են, որոնք առանձին մարդիկ չենել տուած են, իրաքանչիւրն հատուցանելով 6000 տոլար։ Այս ճաշարաններէն մէկն ալ Հրէից համար է, ըստ հրէական օրինաց։

Լուսագրութեան ընկերութիւնն ալ հատուցեր է 3000 տոլար, և ստացեր է առանձնաշնորհութիւն լուսանկարներ հանելու չէնքին թէ դուրսը և թէ ներսը։ Եւ միանգամայն պիտի հատուցանէ 10 առ % անգուտ մուտքին վրայ, երբ 30000 տոլարն անցնի։

Հարիւրամեայ տարեդարձին առաջնորդարաց (guide) ընկերութիւնը 5000 տոլար հատուցեր է և իրաւունք ստացեր՝ միայն ինքը վաճառելու այն գիրքն արուեստից Հանդիսարանին մէջ, չուենենալով հրաման ծանուցմունք տպելու այն գրոց մէջ։

Կաթնավաճառաց ընկերութիւնն ալ 3000 տոլար հատուցանելով իրաւունք ստացեր է չէնք մը կանգնելու կաթ և կաթնեղէն վաճառելու համար։

Վիրճինիա Նահանգին ծխախոտի գործատուն մը 3000 տոլար հատուցանելով առանձնաշնորհութիւն ստացեր է չէնք մը կանգնելու, որուն մէջ ծխախոտ կը չինէ, բոյսը կը պատրաստէ ու կը վաճառէ։

Աստրիական հացարարութիւնն ալ գործարան մը կանգներ է ամենայն սարքքը, և կը բանի այն տեղ հրապարակաւ կատարելով իր արուեստը. և որովհետև չենուած հացը նոյն տեղը կը վաճառուի, ուստի յանձնաժողովը պահանջեր է 3000 տոլար այս առանձնաշնորհութեանն համար։

Ապակւոյ գործարան մը 3000 տոլար հատուցանելով առանձնաշնորհութիւն ստացեր է միայն ինքն հայթայթելու հանդիսադրաց խանութներուն և ցանձնաժողովին պէտք եղած ապակին։

Հարիւրամեայ տարեդարձի Ազգային Պանդան, որ Ֆիլատելֆիայի ընկերութիւն մ'է, արուեստից Հանդիսարանին մէջ պաշտօնատեղի մը հաստատեր է ցանձնաժողովին, հանդիսադրաց և այցելուաց պիտոյիցն համար. և հատուցեր է 5000 տոլար այս իրաւունքը միայն ինքն ունենալու համար, և կանգներ է հինգ փոքրիկ պաշտօնատեղիներ հինգ այլ և այլ դրանց մօտ դրամափոխութեան համար։

Երկրագործութեան չէնքին մէջ սընդարան մը կանգնելու առանձնաշնորհութեանն համար 5000 տոլար հատուցուեցաւ, այսու պայմանաւ որ ամենեին կրակ պիտի չվառուի, և միայն պաղ ըմպելիք պիտի ծառայուի։ Այս պիսի ինն սրճարաններ հաստատուեր են, նոյն գիտն հատուցանելով, որոնք ընդ ամենը պիտի տան 45000 տոլար։

Դրամարկեղաց (coffre-fort) ընկերութիւնն 5000 տոլար հատուցանելով իրաւունք ստացեր է միայն ինքը պահելու ակնեղէններն ու թանկագին առարկաները։ Այս բանիս համար կամարակապ հաստատուն մեծ չէնք մը չինել տուաւ, որ ամեն վտանգաց դէմ կը դնէ։

Դրամատէր մը popcorn ըսուած անուշեղէնը վաճառելու համար 7000 տոլար հատուցեր է և առանձնաշնոր-

digitised by A.R.A.R.@

հութիւն ստացեր է այցելուաց ստա-մաքան ասրելու։

Բաց 'ի այս այլեայլ առանձնաշնոր-հութեանց մասնաւոր տուրք մ'ալ կայ վաճառման։ Ճաշարաններն ու ուրիշ տեղուանք 10 սենդ պիտի հատուցանեն առ իւրաքանչիւր կէյլրն ամեն հեղա-նիւթոց որ ներս կը բերեն, մինչև որ վերջանայ Արուեստահանդէսը։ Այս կերպով ելած եկամուտը կը կարծուի թէ հանի գոնէ 50000 տոլար։

Վերամբարձող գործի մ'ալ կայ, որ այցելուները կը հանէ գլխաւոր չէնքին աշտարակներէն մէկուն մինչև ծայրը, և տուրք մը կը հատուցանէ ըստ համե-մատութեան իրեն մոտիը. կը կարծուի թէ այս տուրքը պիտի բերէ 10000 տոլար։

Ֆիլատելֆիոյ West End Railroad ը-սուած երկաթուղոյ ընկերութիւնը տե-սակ մը շոգեշարժ երկաթուղի դրա-մուռէյ հաստատեր է՝ այցելուները ա-բրուեստոյ Հանդիսարանին մէկ ծայրէն միւսը փոխադրելու համար։ Այս առ-անձնաշնորհութեան տուրքն առ նը-ւազ կ'ելլէ 20000 տոլար։

Արուեստոյ Հանդիսարանին ներսը, ու դուրսը հաստատուած հեռադրու-թեան, գործակատարաց, առաջնորդաց և թարգմաններուն հատուցած տուրքը կ'ելլէ 25000 տոլար։

Միացեալ–Նահանգաց կանայք ալ որ կը պահանջեն այրական իրաւունք ունենալ, իրենք ալ ուզեցին մասնա-կցիլ այս Արուեստահանդիսին։ Առան-ձին բաժին մը ընդգրեցին միայն կանանց համար, « որպէս զի, կ'ըսէ անոնց նա-« խագահուհին իր յայտարարութեա-« նը մէջ, ճանչցուի թէ որչափ գործեր « են կանայք ալ դարուց ընթացքը մէջ։ « և ապացուցընել օրինակներով թէ կը-« նոջ գործունէութիւնն շրջանակը պէտք « չէ սահմանել միայն տեղով »։ Հա-տուցանելով 30000 տոլար կանգնեցին նշանաւոր ու գեղեցիկ ժողովարան մը կանանց, ուր հաւաքուած են այն ամեն գիտուն ու կատարելագործութիւն-ներն որ ըրեր են կանայք ճարտարա-բրուեստութեան մէջ, գիտութեանց մէջ, ձեռնարուեստից մէջ, և ուրիշ այն ամեն ասպարէզներուն մէջ, որ բաց են մարդ-կեղէն հանճարոյն առջև։ Այս ժողով-բարանին չէնքն յունական խաչի ձև ունի. և 9000 քառակուսի մէջը մակերևու-թէն աւելի տեղ կը գրաւէ։ Ներսը շքեղ ու փառաւոր տեսք մ'ունի, մէջտեղն ալ աղբիւր մը կայ, պատերը զարդարուած են այլաբանական պատկերակոյտերով (groupe), ինչպէս են Հաւատք, Յոյս, Սէր, Արուեստ, Ուսումն, Կրօնք, և այլն, և ասղանկար դրօշներով։

Գեղեցիկ արուեստից դահլիճին մէջ երկաթէ ամրապահ արկղ մ'ալ դրուած է 'ի ցոյց, որ պիտի միանձնեանուորէ ա-զատութեան հարիւրերորդ տարեդար-ձը։ Այս արկղը ապակէ դարաններ ու-նի, որ Արուեստահանդիսին վերջի օրը պիտի գոցուին. ու մէյ մ'ալ հարիւր տարիէն ետքը պիտի բացուին, այսինքն յամին 1976։ Այս դարաններուն մէջ պիտի պահուին շատ մը ալպոմներ (Album) լուսանկարուց և ինքնագիր ստորագրութեանց, և անոնց մեկը պի-տի ըսուի Ալպոմ Միացեալ–Նահանգ-գաց հարիւրամեայ տարեդարձին. ո-րուն մէջ պիտի գրեն անունին Արուե-ստահանդիսին ցանձնաժողովոյն ան-դամները, բարձրագոյն ատիճանա-ւորը, անուանի այցելուք, նշանաւոր օ-տարականք, և երևելի մարդիկ։

Ուրիշ ալպոմներ ալ պիտի ըլլան, որոնք այն արկղին մէջ փակուած պի-տի չպահուին։ Նախագահական ալ-պոմը պիտի բովանդակէ Ամերիկայի Հասարակապետութեան ամեն նախա-գահներուն լուսանկար կենդանագիր-ները և ձեռագիրները, որոնք 1876 թուականէն մինչև 1976 հեռաղեռաէ պիտի յաջորդեն։ Ուրիշ ալպոմներ ալ պիտի ըլլան պաշտօնակալաց համար, բարձրագոյն արդարութեան ատենա-կալաց, ժողովարանաց նախագահնե-րուն, և այլն։ Այս ամեն ալպոմներուն մէջ ճերմակ էջեր ալ պիտի թողուին, որպէս զի 1876 թուականին ստորա-գրողներուն սերունդը կարող ըլլան

digitised by A.R.A.R.@

դնել իրենց ստորագրութիւնն ինչուան 1976։

Նոյն երկաթէ արկղին մէջ պիտի պահուին արծաթէ կաղամարն ու գրիչները, որոնք ստորագրելու պիտի ծառայեն։ Այն գրիչներէն մէկ հատը Լոնկֆելոյ ամերիկացի երեւելի բանաստեղծը նուիրեր է, որ հիմա ինքն ալ Ֆիլատելֆիա կը գտնուի։

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Պեռլինու աշխարհագրական ընկերութեան նիստերէն մէկուն մէջ մոտերս քիրիոֆ դասատուն գրուածք մը կարդացեր է, որով կը ցուցընէ թէ տարուէ տարի Ամերիկայի Միացեալ-Նահանգք կ'առաւելուն 206 ոգիք առ 10000, Պաքսոնիա՝ 128, Բրուսիոյ հին դաւառները՝ 113, Անգղիա՝ 88, Գաղղիա՝ 38։ Այնպէս որ Գաղղիոյ տարեկան կանոնաւոր աճումը կ'ըլլայ 3800 ոգիք առ մէկ միլիոն, և իբր 137000 ոգիք՝ դնելով հաշուի հիմն 1872 տարուոյն վերջին պաշտօնական աշխարհահամարը, և կամ 140–141000, համարելով որ հիմա Գաղղիա 37 միլիոն բնակիչ ունենայ։

Անցեալ տարուան (1875) երկրորդ եռամսուն մէջ Աւստրիոյ Վեննա մայրաքաղաքին բնակիչն էր 1,001999 ոգիք, որոնց 341254 ոգիք արուարձանները կը բնակին։ Ասկէ հարիւր տարի առաջ, կամ աւելի հիշդ խօսելով հարիւր չորս տարի առաջ, յամին 1772, այս մայրաքաղաքին բնակիչքն էին 192971 ոգիք։

Աղեքսանդր կայսրը քանի որ դահ ելեր է, Ռուսիոյ կայսերութիւնն ընդարձակեր է իբր 200 միլիոն հեկտար, որ է ըսել չորս անգամ Գաղղիա, բնակիչն աճեր է, 22,546000 ոգիք, և հիմա ունի 87,746000 բնակիչ. որ գրեթէ կը հաւասարի Գաղղիոյ, Գերմանիայի, Պարնիոյ, Բորդուգալի և Իտալիոյ բնակչաց բովանդակութեանը։ Տէրութեան մուտքն աճեր են 205 միլիոն ռուպլի, և կամ 820 միլիոն ֆր. և հիմա այս մուտքն է 559,361197 ռուպլի, որ է 2237,444788 ֆր։ Գործարանաց թիւն որ 9256 էր, հիմա է 18892, և անոնց տարեկան բերքն է 157–448 միլիոն ռուպլի կամ 628–1772 միլիոն ֆռանգ։ Վաճառաբերութիւնն աճեցաւ ու եղաւ 280 միլիոն ռուպլի և կամ 1120 միլիոն ֆռանգ, ու վաճառահանութիւնն եղաւ 165 միլիոն ռուպլի, և կամ 660 միլիոն ֆռանգ։

digitised by A.R.A.R.@